ՕԶՈՒՆԻ ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Ա. Ն. ՇԱՀԻՆՅԱՆ

Օձունի տաճարի արևելյան պատին, դրսից փորագրված է երկաթագիր, գեղաքանդակ, մեկ տողանի փակագիր հնագույն մի արձանագրություն, որը լույս է սփռում հուշարձանի կառուցման ժամանակը որոշելու հարցում։

Արձանագրությունը խիստ հողմահարված է և ունի հետևյալ պատկերը (նկ. 1)։



Նկ. 1

Դրա վերծանությամբ զբաղվել են մի շարք մասնագետներ[1]։ Պ. Մուրադյանը հիշյալ արձանագրությունը մեկնել է հետևյալ կերպ. «Կողմաս... [զ]շ[ինաւղ] սուրբ տնակի, ողորմեա [ով սուրբ] Թեւոդորոս»[2]։

Արձանագրության նման վերծանությունը չի կարելի ընդունելի համարել հետևյալ պատճառներով։ Նախ, որ արձանագրության սկզբի «Կողմաս» անունից հետո մինչև «Շ» տառը՝ երկու քարի վրա, որտեղ կարող էր տեղավորվել 8—9 տառ, ոչինչ չի պահպանվել։ Այնուհետև մինչև «Ս» տառը, որտեղ կարող էր լինել 6—7 տառ դարձյալ ոչինչ չի մնացել, իսկ «ողորմեա» բառից մինչև «Թեւոդորո» բառը պակասում է 3—4 տառ։

Արձանագրության ենթադրյալ «սուրբ» բառի «ս»-ից առաջ հազիվ նկատվում է ինչ-որ տառի ներքին ստեղը, որը անտեղի նույնացվել է «ղ» տառի ներքևի ստեղին և վերականգնվել «ղ»։ Դրանից էլ ելնելով՝ վերականգնվել է «Շ» տառի հետ միասին «Շինաւղ» կամայական բառը։ Այստեղ պետք էր որոնել «շ»-ով սկսվող մեկ այլ բառ։ Կարելի է ենթադրել նաև, որ այն ամե-

---

1 Լ. Մելիքսեթ-Բեկ, Հայաստանի VII դարու արձանագրություններից. «Տեղեկագիր» ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի Հայկական ֆիլիալի, 1941, Երևան, № 9 (14), էջ 64—65, Գ. Շախկյան, Օձունի եկեղեցու վաղ շրջանի արձանագրությունները, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1972, № 9, էջ 90—100։ «Թեւոդորոս» բառից հետո տեղում պահպանվել է ևս երկու տառի մնացորդ, որոնցից ակնհայտ երևում է երկրորդի մի ստեղը, որը և կարող էր պատկանել Ա, Ս և Ե տառերից մեկին։

2 Պ. Մ. Մուրադյան, Դիտողություններ Օձունի արձանագրությունների վերծանման առթիվ, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1973, № 6, էջ 74։

նեին էլ «շ»-ով սկսվող բառ չէ, ինչպես պարզվում է ստորև։ Մեզ թվում է, որ ենթադրյալ «ղ» տառի տեղում պահպանված ստեղը կարող էր պատկանել զ, ձ կամ շ տառերին (բայց ավելի հավանական է վերջինս) և «ս» տառի հետ կազմում է ինչ-որ մի բառի վերջին մասնիկը։

Այնուհետև արձանագրության փակագիրը վերծանվել է «սուրբ տնակի»։



Նկ. 2

Այս վերծանությունը չի կարող ընդունելի համարվել, որովհետև հայ վիմագրությանը լավատեղյակ մասնագետը անմիջապես կնկատեր, որ մեզանում «սուրբ» բառը նման փակագրություն չունի և չի ունեցել։ Հայ վիմագրության մեջ այն ունի արտագրման կանոնիկ ձև. կամ այն գրվել է ամբողջական «սուրբ», կամ էլ՝ ՍԲ հապավված ձևերով ու պատիվով, հետևաբար այդ բառը չի կարող «սուրբ» վերծանվել։ Ներկա դեպքում ենթադրյալ «սուրբ» բառի «ս» տառը, որը նկատելիորեն հեռու է «ուր» փակագրից (նկ. 2), պետք է որ կազմեր իրեն նախորդող մեկ այլ բառի վերջի մասնիկը «շ» տառի հետ միասին, հավանաբար կապված «խաչս» և կամ մեկ այլ բառի հետ[3]։ Եվ եթե

3 «Խաչս» բառը հնարավոր է վերագրել թե՛ տաճարին և թե՛ V—VI դդ. այն թեավոր խաչին, որի մեկ թևը «Մարկոս» արձանագրությամբ այժմ գտնվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում։

դա այդպես է, այնուհետև մեզ մնում է վերծանել հիշյալ փակագրի առաջին հատվածը, որպիսին հնարավոր ենք համարում ընթերցել ՈՒՐ, որովհետև հայերենում «ՈԲ»-ով և կամ «ՈՒԲ»-ով բառ չի սկսվում։ Փակագրի երկրորդ հատվածը իր մեջ ընդգրկում է 4 տառ՝ տ, ի, կ, ն, որոնցից կարելի է արտարերել տիկն, տիկին, տնիկ, տնկի և այլն, բայց ոչ մի դեպքում «տնակի»։ Փակագրի վերջին հատվածը «տնակի» վերծանելու դեպքում, սովորաբար այն պետք է, որ հենված լիներ «ա» կենտրոնական տառի վրա, իսկ քանի որ տեղում այդպիսին չկա, ուրեմն այդ փակագիրը երբեք չի կարող «տնակի» վերծանվել։ Մեզ հավանական է թվում, որ կարելի է այդ երկու փակագիրը միացնել իրար ու վերծանել «Ուրտիկն» կամ «Ուրտիկ[ի]ն», որպես տեղանուն՝ «Ուրտ» արմատով։

Ը մի բերելով մեր դեռևս ոչ վերջնական վերոհիշյալ դիտողությունները, նշված արձանագրությունը հնարավոր ենք համարում մասնակիորեն վերծանել հետևյալ կերպ.

«Կողմաս.....շ... [խաչ]ս Ուրտիկին ողորմեա... Թեոդորո [սա]»։

Ինչ վերաբերում է արձանագրության «շ» տառին, ապա կարելի է աշմարտապատում մի քանի ենթադրություններ անել, բառակապակցելով այն «Կողմաս յաղաւթս յիշե» և կամ «Կողմաս ի Քս Ած յիշե զխաչս Ուրտիկին...», բայց բոլոր դեպքերում դրանք կմնան միայն ենթադրություններ ու պատումներ։



Նկ. 3

Այսպիսով, թեև արձանագրությունը ըստ երևույթին շինարարական բնույթ չունի, բայց և այնպես ժամանակակից է հուշարձանի կառուցմանը և անուղղակիորեն կապված է նրա շինարարության հետ։ Որ Կողմասը տաճարի շինարարության կամ հովվության հետ կապված երևելի անձնավորություն է՝ այդ մասին տարակարծություններ չպետք է լինեն։ Օձունի տաճարի արևելյան պատի վրա, հիշյալ փակագրված արձանագրությունից անմիջապես ներքև, «Ուրտիկ» բառի տակ միակտոր քարի վրա փորագրված է մի խաչ և պատկերաքանդակ՝ Մարիամ Աստվածածինը Հիսուս Մանուկը գրկին (նկ. 3)։

Արդ՝ հարց է ծագում, ո՞վ է Օձունի տաճարի արևելյան պատին փորագրված արձանագրության Կողմասը։ Այն չի կարող տաճարի շինարար-ճարտարապետը լինել։ Ինչպես որ, օրինակ, էջմիածնի Հռիփսիմե տաճարի «ՔՍ ԱԾ յիշեա զԿոմիտաս Հայոց կաթողիկոս՝ շինաւղ սրբոյ Հռիփսիմեի» արձա-

նագրությունից չենք կարող ենթադրել, թե Կոմիտաս կաթողիկոսն է եղել Հուշարձանի շինարար-ճարտարապետը, այնպես էլ տվյալ դեպքում նման ենթադրություններ հավաստի չէր լինի, անդամ եթե Օձունի արձանագրության մեջ «շինաւդ» բառը լիներ։ Իսկ ինչպես նկատեցինք վերևում, Օձունի հիշյալ արձանագրության մեջ ենթադրվող «շինաւդ» բառն էլ չի հիմնավորված։

Համոզեցուցիչ չէ նաև այն ենթադրությունը, որ «Օձունի եկեղեցին նվիրված է եղել Թեոդորոս Տյուրոնին», որովհետև վերը նշված փակագրի տակ պատկերված է եղել Տիրամոր պատկերը և ոչ թե Թեոդորոսինը[4]։

Հնարավոր է, որ նախապես Օձունի տաճարը կոչված լիներ ս. Աստվածածին։ Սակայն նույն տաճարի վրա փորագրված XIII դարի մի արձանագրության մեջ այն կոչված է Ս. Նշան[5]։

Իհարկե, դժվար է վերջնականապես պարզել Կողմասի, ինչպես նաև տաճարի հարավային բարավորին փորագրված արձանագրության՝ Թովմասի անձնավորությունների հարցը։ Բացառված չէ, որ Կողմասը կարող էր լինել Օձունի տաճարի բարերարը և կամ առաջնորդը, իսկ Թովմասը՝ նրա շինարար վարպետը, որպիսին չէր կարող չնշվել, երբ հուշարձանն ունենում է շինության ժամանակակից խոշոր և գլխավոր արձանագրություն, ինչպիսիք հիշատակվում են Հռիփսիմեի, Մաստարայի, Աիսիանի և այլ հնագույն տաճարների արձանագրություններում։

Այժմ երկու խոսք Օձունի Կողմասի մասին։

«Գիրք թղթոցի» 606 թ. մի փաստաթղթում հիշատակվում է Հայաստանի երևելի հոգևորական գործիչներից ոմն «Կողմաս Ուրդայ»[6]։ Թե ի՞նչ կապ կա Օձունի և Ուրդի այս Կողմասների միջև՝ ստույգ հայտնի չէ։ Միայն ենթադրական համեմատություններ կարող ենք կատարել այդ առթիվ։ Մեր կարծիքով, այդ հարցին կարելի կլիներ պատասխանել, եթե մենք կարողանայինք պարզել Ուրդա եկեղեցու կամ Ուրդի տեղադրությունը։ Գ. Հովսեփյանը հակված է ենթադրելու, որ Ուրդա եկեղեցին Աշտարակի շրջանի «Իլան-չալան» (այժմ՝ Արտաշավան) գյուղում պետք է գտնվեր։ Բայց քանի որ այդ դեպքում Ուրդա եկեղեցին առնվազն VI դարի խոշոր շինություն պետք է եղած լիներ, իսկ այդպիսին չկա տեղում (եղածը VII դարի կենտրոնագմբեթի մի մատուռ է), ապա այդ դեպքում հնարավոր է դառնում Ուրդը կամ Ուրդա եկեղեցին փնտրել Հայաստանի մեկ այլ վայրում։

Հաղբատավանքի 1273 թվակիր, հայտնի խաչելության խաչքարի արձանագրության մեջ խոսվում է այն մասին, որ ի թիվս այլ ընծաների, Տեր Հովհաննեսը կազմել է տալիս «զմենծածախ պահարանն Ուրդաձորո սուրբ Նշանին» ու նվիրում Հաղբատի վանքին[7]։ Թե Թումանյանի այժմյան շրջանի ո՞ր մասում է գտնվել այս Ուրդ-Ուրդաձորը, հայտնի չէ։ Այն հավանաբար այս վայ-

---

4 Տե՛ս Պ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 74։

5 Օձունի տաճարը, XIII դարին վերաբերող մի արձանագրության համաձայն, կոչվել է Ս. Նշան (առնում ենք մեր հավաքածուից)։ 1964 թ. մեր կողմից հավաքված են Օձունի տաճարի բոլոր արձանագրությունները։

6 Գ. Հովսեփյան, նյութեր և ուսումնասիրություններ, պրակ Գ, էջ 20։

7 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 194, 213, 284։

ներից հեռու չպետք է գտնվեր։ Այդ իմաստով իրիստ շահեկան է դառնում Օձունի տաճարի արևելյան պատի հիշյալ արձանագրության «Ուրտ-Ուրտիկը», որն էլ ամենայն հավանականությամբ «Գիրք թղթոցում» հիշատակված նույն Ուրդն է և կամ Հաղբատավանքի վերը նշված արձանագրության Ուրդ-Ուրդաձորը։

Այդ դեպքում հարց է ծագում, թե ո՞րն է Ուրդ-Ուրդաձորի Ս. Նշան կոչվող եկեղեցին։ Թումանյանի շրջանում (Հաղբատ, Հոռոմայր, Ծաթեր) կան մի շարք եկեղեցիներ՝ Ս. Նշան անունով, բայց դրանցից ոչ մեկը V—VII դդ. կառույց չէ, հետևաբար չի համապատասխանում «Գիրք թղթոցի» Ուրդա եկեղեցուն և Ուրդին։ Ինչպես նշեցինք վերևում, Օձունում ցարդ աննկատ մնացած և մեր կողմից հավաքված մի արձանագրության մեջ տաճարը կոչվել է «Ս. Նշան», հավանաբար պրոֆեսոր Կ. Ղաֆադարյանի «Հաղբատ» աշխատության մեջ հիշատակված նույն ինքն՝ Ուրդ-Ուրդաձորո Ս. Նշանը։ Այս բոլորից էլ հնարավոր է դառնում ենթադրել, որ «Գիրք թղթոցում» հիշատակված Ուրդը կամ Ուրդա եկեղեցին նույն Օձունի տաճարն է և կամ Օձունի նույն «Ուրտ-Ուրտիկի» (խաչ) եկեղեցին (որովհետև «խաչ» նշանակում է նաև նշան), իսկ «Ուրդայ» Կոզմասն էլ՝ նույն Օձունի արձանագրության «Ուրտ-Ուրտիկի» Կոզմասը։ Վերջինս որպես Հայաստանի երևելի հոգևորական գործիչ՝ հանդիսացել է Օձունի տաճարի հիմնադիրը կամ առաջնորդը, որը և ստորագրել է 606 թ. Աբրահամ կաթողիկոսի օրոք կազմված ձեռնարկի տակ։

VI—VII դդ. դժվար թե հայոց մեջ այս ոչ շատ տարածված Կոզմաս անունով նույնանուն, երևելի հոգևորական բազմաթիվ գործիչներ լինեին։ Ուշագրավ է, որ այս երկու Կոզմասներն էլ VI դարի գործիչներ են, որպիսի հանգամանքը խոսում է այն մասին, որ այստեղ մենք գործ ունենք միևնույն անձնավորության հետ։ Ուրդա կամ Ուրտիկի Կոզմասը Օձունի տաճարը հիմնած և այնտեղ պաշտոնավարած կարող էր լինել VI դարի 60-ական թթ., երբ պարսկա-բյուզանդական հաշտության բանակցությունների հետևանքով առժամանակյա խաղաղություն էր տիրում Հայաստանում։ Իսկ Օձունի տաճարի շինության ժամանակն էլ VI դարից ուշ չէ, ինչպես ենթադրում է վաստակաշատ գիտնական Գարեգին Հովսեփյանը[8], որը հանգամանորեն ուսումնասիրել է հուշարձանի կառուցվածքը և ճարտարապետական առանձնահատկությունը։

Օձունի տաճարի շինությանը ժամանակակից արձանագրություններն իրենց գրչությամբ, հնագրությամբ և նույնիսկ փակագրության յուրահատուկ ձևերով ավելի հնաբույր են, քան Եղվարդի, Հռիփսիմեի, Մաստարայի և այլ հնագույն արձանագրությունները։

Այսպիսով, թվում է, թե ավելի որոշակի են դառնում Օձունի տաճարի ինչպես անունը (Ս. Նշան) և շինության ժամանակը (560—570), այնպես էլ տաճարի հիմնադիր կամ առաջնորդ Կոզմասի անձնավորության ինքնությունը։

---

8 Գ. Հովսեփյանը Օձունի տաճարի շինության ժամանակը նշանակում է V դարի վերջը և VI դարի սկիզբը (տե՛ս նրա «Նյութեր և ուսումնասիրություններ...», պրակ Գ, էջ 38)։ Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ այստեղ, Օձունում պահպանվել է V—VI դդ. արձանագիր և գեղաքանդակ թևավոր մի խաչի բեկոր։

О ВРЕМЕНИ ПОСТРОЕНИЯ ОДЗУНСКОГО ХРАМА

А. Н. ШАГИНЯН

(Резюме)

На восточной стене Одзунского храма имеется надпись плохой сохранности в одну строку, высеченная крупными буквами, среди которых имеется до сих пор не расшифрованная лигатура. По нашему мнению, лигатура читается ՈՒՐՏԻԿ—Уртик, название местности. Это помогает прочесть и осмыслить текст надписи: «ԿՈԶՄԱՍ..... Շ.. [ԽԱՉ]Ս ՈՒՐՏԻԿ[Ի]Ն [Ո]ՂՈՐՄԵԱ... ԹԵՈԴՈՐՈ[Ս Ա]», «Козмас..... ш.. Крест Уртика помилуй... Теодора».

На основе изучения палеографических особенностей надписи и сообщений древнеармянских авторов выясняется, что Одзунский храм был построен в 560- годы. Он назывался «Ս. Նշան», а его основателем или главным настоятелем был Козмас.